



# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

13 ապրիլի 2015թ.

N 76-Ս

ք.Ստեփանակերտ

#### **ԹԻՎ 9 ԸՆՏՐԱՍԱՐԱԾՔՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆԳՈՎ ՊԱՏԳԱՄԱԿՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ Տ.ԱՂԱՍՅԱՆԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Թիվ 9 ընտրատարածքում գրանցված Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Տիգրան Վաչեյի Ադամյանը 2015 թվականի ապրիլի 9-ին ներկայացրել է նոտարական կարգով վավերացված ինքնաբացարկի մասին դիմում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 119-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն «Պատգամավորի թեկնածուները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն, ինչպես նաև քվեարկության օրվանից հետո դիմում ներկայացնելու դեպքում իրավունք ունեն հանելու իրենց թեկնածությունը: Ինքնաբացարկի մասին դիմումը վավերացվում է նոտարական կարգով, կամ թեկնածուն ինքնաբացարկի մասին իր դիմումը հաստատում է հանձնաժողովի նիստում:»:

Նույն օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն «Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուի գրանցումն ուժը կորցրած է ճանաչվում՝ 1) կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ, եթե նա ներկայացրել է դիմում ինքնաբացարկի մասին:»:

Վերոգրյալի հիման վրա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է**:

1. Ուժը կորցրած ճանաչել թիվ 9 ընտրատարածքում գրանցված Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Տիգրան Վաչեյի Ադամյանի գրանցումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ՆԱԽԱԳԱՀ

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ